ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 հունիսի 2020թ. N205-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ ՈԼՈՐՏԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներով և ելնելով Տավուշի մարզի համայնքներում աղբահանության և սանիտարական մաքրման ոլորտի աշխատանքների ուսումնասիրման անհրաժեշտությունից

Որոշում եմ

1.Ստեղծել աշխատանքային խմբեր՝ հետևյալ կազմերով.

1) Իջևանի տարածաշրջան

Ղալումյան Միքայել -մարզպետարանի քաղաքաշինության վարչության բնակարանային և ենթակառուցվածքների խմբի գլխավոր մասնագետ

Հարությունյան Նորիկ - «Իջևանի քաղաքային կոմունալ ծառայություն» ՀՈԱԿ-ի ճարտարագետ /համաձայնությամբ/,

2)Դիլիջանի տարածաշրջան

Մելքումյան Միսակ- մարզպետարանի քաղաքաշինության վարչության ճարտարապետաքաղաքաշինական խմբի գլխավոր մասնագետ

Մանթաշյան Սամվել-Դիլիջանի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ /համաձայնությամբ/,

3)Նոյեմբերյանի և Կողբի տարածաշրջան

Պետրոսյան Ռուբեն- մարզպետարանի քաղաքաշինության վարչության ճանապարհաշինության և տրանսպորտի բաժնի ավագ մասնագետ

Գիշյան Խաչիկ - Նոյեմբերյան համայնքի ղեկավարի տեղակալ /համաձայնությամբ/,

4) Բերդի տարածաշրջան

Սարգսյան Արտակ- մարզպետարանի քաղաքաշինության վարչության ճանապարհաշինության և տրանսպորտի բաժնի վարիչ

Դավթյան Արշալույս-«Բերդի կոմունալ ծառայություն»ՀՈԱԿ-ի տնօրեն
/համաձայնությամբ/,

5) Այրումի տարածաշրջան

Օթարյան Կարեն- մարզպետարանի քաղաքաշինության վարչության ճանապարհաշինության և տրանսպորտի բաժնի ավագ մասնագետ

Մակյան Արկադի- Այրում համայնքի ղեկավարի խորհրդական /համաձայնությամբ/:

2.Աշխատանքներին ներգրավել մարզպետարանի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության ՏԻ և ՀԾ հարցերի բաժնի գլխավոր մասնագետներ Վահե Հովհաննիսյանին /Դիլիջանի տարածաշրջան/ և Խաչիկ Ամիրաղյանին /Նոյեմբերյանի տարածաշրջան/:

3.Հաստատել ուսումնասիրվող հարցերի ցանկը՝ համաձայն թիվ 1 հավելվածի:

4.Աշխատանքների ուսումնասիրության ժամանակահատվածը սահմանել 2020թ. հուլիսի 1-ից 10-ը:

5.Աշխատանքների համակարգման պատասխանատվությունը վերապահել մարզպետարանի քաղաքաշինության վարչության բնակարանային և ենթակառուցվածքների խմբի ավագ մասնագետ Արմեն Ճաղարյանին:

6.Որոշման կատարման հսկողությունը վերապահել մարզպետարանի քաղաքաշինության վարչության պետի պաշտոնակատար Տիգրան Մուշեղյանին:

Մարզպետ՝ Հայկ Չոբանյան

X

Signed by: CHOBANYAN HAYK 1503730050

30 հունիսի 2020թ.

Ք. Իջևան

-Հավելված 1-

ՀԱՐՑԱՇԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի համայնքներում աղբահանության եվ սանիտարական մաքրման ոլորտի աշխատանքների ուսումնասիրման վերաբերյալ

1.Համայնքում աղբահանության և սանիտարական մաքրման 2020թ. սխեմայի առկայությունը /նշել ավագանու նիստի արձանագրության համարը, ամիս-ամսաթիվը/:

2.Ուսումնասիրել համայնքի աղբավայրի վիճակը, համապատասխանությունը շահագործման մինիմալ նորմերին /սանիտարական գոտու և տեղանքը բնորոշող վահանակների առկայությունը/:

3.Շրջագայել համայնքում /խոշորացված համայնքներում նաև գյուղերում/, ուսումնասիրել միջհամայնքային և համայնքամիջյան ճանապարհների, սանիտարական մաքրման տարածքների, աղբամանների տեղադրման վայրերի, ինչպես նաև համայնքի մոտակա վարչական տարածքների մաքրությունը /լուսանկարել տարերայնորեն առաջացած աղբյուսները, աղբի լցոնումներն ու կուտակումները/:

4.Ուսումնսիրված տարածքների իրավիճակի վերաբարյալ կազմել տեղեկանքներ՝ ուսումնասիրության արդյունքներն արտացոլող լուսանկարներով:

5.Նշել համայնքում աղբահանության և սանիտարական մաքրության անբավարար վիճակի հիմնավորված պատճառները /աղբահան տեխնիկայի, աշխատուժի, ինչպես նաև ֆինանսական միջոցների բացակայություն և այլն/: